ՀՆՉՅԱԿ

Ես, դեռ մանուկ, ժամերով կսուզվեի, վերացած,
Դյուցազնական երգերու շլացքներու մեջ ուժգին,
Եվ ունկնդիր անոնց հաղթ հնչյուններու նվագին՝
Կզգայի, թե մարդն ինչպես կըլլար հերոս ու աստված:

Դեռ ձայներն այդ ներդաշնակ կուտան սլացք իմ հոգվույն՝
Զքնաղ բոմբյուն մարտերու, սուրի փայլակ ու սուսեր,
Երիվարներ ծառացած, հերոսական շեփորներ,
Մեր այնքա՞ն ջինջ երկնքի քաղցրության մեջ թաթավուն:

Քաղաքներու մեջ հսկա ես գեղջուկ եմ մնացած:
Ահ, կուզեի հին ռազմիկ ըլլալ այս նոր օրերուն,
Ուր այնքան նենգ են արտերն ու հոգիներն՝ այնքան ցած:

Կուզեի դեռ զգենուլ պերճ հանդերձներ ակնահեռ,
Եվ կերազեմ երգել մեծ, ահեղ արքա մը, որուն
Փառքի կառքին ետևեն կերթան գերի արքաներ:

ՋԵՆՈԲԻԱ

Օ՜ գեղեցիկ Զենոբիա իմաստության վեհ խույրով,
Մեծ կայսրություն մը ամբողջ կտարածվեր ոտքիդ տակ:
Թևըդ հպարտ, որ երբեք չգրկեց սեր ու հեշտանք,
Ժողովուրդներ կվարեր, ազգեր ըմբոստ ու խռով:

Քեզի թավիշ ու մետաքս, ադամանդե դրասանգ,
Քեզի խունկերն Արաբիո և բուրմունքներն հնդկական,

Քեզի շքեղ հաղթակառք՝ անմահությանը վկան,
Եվ պապղուն սուր մը դեռ, որ քավես մեղք ու մեղսանք:

Բյուր հպատակ և ո՛չ մեկ երկրպագու ոտքերուդ.
Սիրտը լեցուն տխրությամբ, կարոտ գրկի մը գոլուտ՝
Կերթայիր դուն, կրկնելով ռազմի բառեր բոցակեզ:

Եվ օր մը ալ, երբ հոռոմ բարբարոսն այն վերջապես
Սիրահարի սիրտն իր բուխ փոքրիկ ափիդ մեջ դրավ,
Լքեցիր գահդ, ուր այնքա՞ն միանակ էիր դուն իրավ:

ԼԵՆԿԹԵՄՈՒՐ

Լ. ԷՍԱՃԱՆՅԱՆԻՆ

Ինչպե՞ս երգել փառքդ անփառք, օ Լենկթեմո՛ւր:
Հևքը այուքի կլավի՞, երբ մրրիկներ կան.
Ծուրջդ՝ մահվան հոնդյուններ, կոծ ու կակաղ:
Եվ դեռ թռչող հրամաններդ՝ ցին ու ուրուր:

... Գիշեր: Աշխարհ քուն է մտած: Անասող երկինք:
Բյուր գանգերու վրա, դիզված, ինչպես բուրգեր,
Մարդ մը անփույթ կերազկոտի զերթ գիշակեր,
Մինչ կեռա գետն, համակ արյուն ու ճապաղիք:

Ծառագունած չոր մատերեն կկախվի ցած
Ոսկրե համրիչ մը սոսկալի, իսկ քովն անոր,
Գերանդիներ բռնած՝ շարքի են լուռ կանգնած

Փերի ու ճին, ուրվականներ ժանտ ու դժնյա:
Եվ Մահն անոր մոտենալով, կըսե խոժոռ.
— Վաղը հարավ գնա, օ իմ ժի՛ր պաշտոնյա...

ՄՈՒՀԱՄՄԵԴ

Խոնարհորեն կթերթեմ գիրքդ, Մուհամմե՛դ:
Դուն, որ եղար թե՛ նվաճող և թե՛ գիտուն,
Պարզե՛ ինձ մութը Ղուրանիդ սուրահներուն,
Որ կարենամ ըմպել գեթ պուտ մը գինիեդ:

Հունչը խոսքիդ անապատներ կլեցներ:
Եվ չոր սամումը՝ քու շունչիդ ահեղ քամին,
Կհալածեր ու կքշեր փոշին մթին,
Որ արտերուն բաշխեր կանաչ օվազիսներ:

Կուզեիր հոն տնկել թուփ ու արմավի ծառ:
Թե փաթթոցդդ հագած մեն մի պիղծ հետևորդ
Մարդու արյամբ լոկ ողողեց քիմք ու կոկորդ,
Ալլահ գիտե, թե դուն որքան էիր անչար:

Բայց մանավանդ, օ դո՛ւն, ոգի՛ աչքերով խեթ,
Մարգարե սուտ թե ճշմարիտ, հին ուղտապան,
Ինչպե՞ս կրցար քանի մը պարզ բառով միայն
Ցեղ մը քոչվոր դարձնել ընտիր ազգերու պետ:

ԾՈՎԱՀԵՆԻ ԵՐԱԶ

Օ՜ մարտերու հաճախանքներ փոթորկաբույր,
Հաճախանքներ արկածներու հնամենի:
Հաղթերգներու պարս կա իմ մեջ, որուն ի լուր
Կզգամ ճակտիս դրասանգներ Ծիր կաթինի:

Օ՜ երկիրներ, ծովեր անհուն, զոր չեմ տեսեր,
Լեռներ, ափեր ու բլուրներ շեկ ավազի,
Օ՜ մեկնումներ, խող մեկնումներ, վեհ մեկնումներ
Դեպի անհայտ ու անանուն հով ու կղզի:

Օ՜ հաճախանքը երթերու արբեցուցիչ,
Կայմեր վերձիգ, ցուկներ ցից ու ջրահեղձ,
Դրոշներ, կարճ հրամաններ, մրրիկի ճիչ,
Թևեր, ինչպես մեծ ծաղկեփունջ, ջուրերու մեջ:

Օ՜ անտառ ու ափեր, որ կույս, անհուպ են դեռ,
Օ՜ տեսիլներ, օ՜ ոսկիի մոլուցք ու մաղձ,
Օ՜ հոգեցունց մղձավանջներ, անսանձ սույրեր
Պամպասներու վրա, դեպի հասարակած:

Օ՜ նայվածքներ անհունության վրա բացված,
Ցից դրոշներ և նվաճված երկիր ու հող,
Նոր քամիներ, այուքեր հուզիչ, ինչպես քերթված,
Քաղաքներու պաշարումներ, բերդի գրոհ...

Ես՝ արդի մարդը, ունիմ հին, հի՛ն հպարտանք՝
Արյանը մեջ կթավալին ասքեր ու տաղ,
Համրիչի պես կգլեմ ես քառյակ ու գանգ,
Եվ փառապանծ են երգերը, ինչպես մետաղ:

ՀԻՆ ԱՎԵՐԱԿՆԵՐ
(Հայաստանյան տեսիլ)

Կանաչ ոգին դաշտերու կարբեր լուանի առուեն,
Եվ կեսգիշերը կօրրեր ճյուղերու քունը ճերմակ,
Կծաղկեին աստղերու շողերեն լիճ ու լճակ,
Ուր թեղոշները հուշիկ կթոթվեին բյուր հայրեն:

Այն ժամն էր, երբ աղոթքի համար ձեռքեր կձուլվին...
Մեհյանին քով, զոր մարդիկ և դարերն են ավերած,
Աղբյուր մը կար հեթանոս, որ կոլորվեր ու կամաց
Կեղանակեր հոգևոր տաղ ու տրտունջք ցայգային:

Ծեր կաղնիները, շարված, սաղմոսներու հանգունակ,
— Թագավորներ գահընկեց — կհակեին վայրապար,

Որ կայծկլտուն մարմարի մեջտեղ տեսնեն սպիտակ
Անահիտ մայր դիցուհին պարեգոտով իր երկար...

Օ՜ ԶԱՆԳԵՐ

Դուք, որ ձայնիս միշտ խառնեցիք ձայները ձեր,
Դուք՝ անանուն դևեր արույր ու պղինձե,
Որ ոստոստուն ձեր սույրերով քամիներեն
Առաջ կանցնիք ու կկտրեք դաշտերն ամեն,
Դուք՝ ազնիվ բով, ուր կդառնա հեծքը աղոթք,
Դուք՝ լույսի ճիչ, արծաթե պարս, ողկույզ ատոք,
Վերածնության աճյունակալ, սկիհ անտեր,
Դուք՝ տարորեն հսկա ծաղիկ, որ բույրը ձեր
Կսփռեիք, ինչպես բոսոր նվագ ու Բան,
Դուք՝ հնչուն սիրտ հին դարերու մեջ գոթական,
Խորունկ կշռույթ, երակներու զարկ մշտարթուն,
Դուք, որ ներում կբաշխեիք ու քավություն,
Օ՜ ձույլ զանգեր, ոսկի զանգեր, զանգեր տիտան,
Ողողանջեցե՛ք կյանքի հաղթերգը հավիտյան:

ԿԱՐՈՏԱԽՏ

Եվ ես հաճախ կոգեկոչեմ կղզի մը պերճ,
Որ պարտեզ է համակ, դալլայլ, երգ ու կարկաչ,
Ուր կան լույսի ու կապույտի ցայտք ու ջրվեժ,
Ուր սոսափ է, սյուք է մեն մի կարոտի կանչ,
Եվ օրերն են անմայրամուտ, այգերն՝ անվերջ:

Ծաղկահեղեղ մըն է ամեն առկախ պարտեզ:
Սաղարթներուն վերև բույրի բիլ պարույրներ
Կհորինեն խունկի բարակ ամպերու դեզ,
Որ հեշտագին կցրցքնե շաղիկ ու շեր,
Երբ որ փխրին արտեր անոր ծուփքին ի տես:

Այնտեղ անկոպ աչքեր, անհուն սիրով լեցուն,
Փղոսկրին մեջ դրվագված ջինջ աստղերու պես
Կպսպղան, մինչ երգին տակ սոխակներուն
Թավուտներու մեջ կօրորվին ճոճքեր բեհեզ,
Ուր տարփահեղց արտեր հուշիկ կմտնեն քուն:

Շրթունքներու պես, տերևներ նուրբ ու ստվար,
Զեփյուռներուն կաճեն արինգը հովվական:
Թռչուններու թևերն են վին, մեյմեկ քնար:
Ավազներու և կապտերակ խիճի փոխան
Ոտքերու տակ զանակներ են լճափն ի վար:

Հոն սիրահար առյուծներու հետ եղջերուն
Սիրո շուրջպար մը կբռնե, ուր կդառնան
Սիրամարգներ ու սիրեններ, վագր ու կոյուն:
Եվ երբ իր սերը շշնջա սիրող տղան,
Կզգա հանկարծ Պանի արինգն իր շրթներուն:

Կապտակոհակ ծովն իր ծոցին մեջ հոլանի
Մեղմ կօրորե նավարկելու պատրաստ ժայռեր.
Թևճակներու կշռույթին մեջ ու ճողփյունի,
Որ սնդուսի կարծես շրշյուն են տարուբեր,
Սիրերգներու հոգին է, որ կծածանի:

Զմռան պատրանք տալու սիրույն, այնտեղ ճերմակ
Կարապներու փետուրներ են, որ կձյունեն:
Երբ բանաստեղծն ուզե փորձել երգ ու նվագ,
Ան տավիղներ կընդնշմարե մեգին մեջեն,
Զոր կբերեն ջրանույշներ թևերնուն տակ...

ՀՈՎԵՐՈՒՆ ԵՐԳԸ

Մենք ճժույգներն ենք անկնճիռ տարածության,
Ժամանակի մեջ չունինք կայք ու հանգրվան
Եվ կողջունենք ազգ ու ազգինք:

Սահարաներ ու Սիբիրներ կալվածն են մեր,
Կանցնինք ապատ ու անապատ, դաշտեր ու լեռ՝
Ո՛չ կանգ կառնենք, ո՛չ կհոգնինք:

Ի՛նչ չենք տեսած մեր թափառկոտ ընթացքն ի վար՝
Ձյուն գագաթներ, ծով ու ծոցեր մրրկավար,
Ձկար սահման, որ մեզ կեցներ,
Քանզի մենք հողմ ենք, սամում ենք, բուք ու բորան,
Մարգարեներ անագորույն ճշմարտության,
Հոգենորոգ առաքյալներ:

Մեր գրոհները կփլեն կուռք ու կոթող,
Բանակներ ենք հարթավայրեր հորդեցընող,
Ուր չի աճիր մացառ անգամ:
Հերոսներ ենք, չունինք ո՛չ մահ, ո՛չ ալ անուն,
Տիեզերքին ճամբաներուն վրա բանուկ
Մենք՝ ասպետներ թափառական:

Տեսեր ենք վանք, պալատ ու հյուղ, և դեռ մեզի
Ոգորումներն ալ ծանոթ են մութ ու լույսի:
Խարույկներու նման մաքուր,
Կբորբոքենք հաղթանակներ, փառք ու քերթված,
Սրբազան հուրն արարչության, հույսն առ աստված
Եվ լազուրի սլացք ու սույր:

Մենք կնավենք, և չկա ուժ, որ գերբնական
Մեր նավերուն կարենա գեթ կասել ճամբան
Դեպի անհուն, դեպի բևեռ:
Մենք ցունց կուտանք դարավոր բարձր զանգերուն,
Մենք ցասում ենք, վիշտ ենք, կազդույր և գթություն,
Մենք՝ հնք, երկինք, օդ ու թևեր:

Մենք կավետենք Արևն, որու արդարությամբ
Պիտի սիրեն, ձուլվին մարդիկ, և առնե թափ
Ամեն թռիչք, ամեն անուրջ,
Չի մենք՝ լույսի և կապույտի ձիգ ձայնաշար,
Մենք՝ շրջմոլիկ ուրվականներ, անձյուռ տաճար,
Թափառահած Աստվածաշունչ:

Մենք շրջմոլիկ տեսիլ ենք լոկ, անտուն ուրու,
Նման անգահ ու աներկիր արքաներու,
Ճշմարտության առհավատչյան:
Եվ կբոցենք բյուր փարոսներ, ծով ու գիշեր
Եվ պատմության մեջ կոլորենք դար ու դարեր
Բանն ու բարբառն հավերժության:

Ա՛Լ ԱՆՑՅԱԼՆ Է ՄԵՌԱԾ...

Ա՛լ անցյալն է մեռած և մթնած է ուղին...
Սպի մը սրտիս մեջ, որ խոր է, քան թաքուն,
Ձեռքիս մեջ դողդոջուն՝ տերեփուկ մը դեղին,
Եվ խորշոմ մը ճակտիս, բույլն անցած օրերուն.
Ահա ինչ որ մնաց, և մթնած է ուղին...

Կհիշե՞ս դեռ՝ լուսեղ ժամերը վաղորդյան՝
Մեռաքսեն ավելի թեթև շող ու շուքեր,
Պարտեզներ, սևեռուն, երկնքի բարության,
Երբ արևը լեռան ընդերքեն կժայթքեր,
Կհիշե՞ս տակավին ժամերը վաղորդյան:

Օրերն այդ փութանցիկ կհուզե՞ն մերթ հոգիդ.
Երբեմնի երդումներն ու հնքերն անհամբեր,
Խոստումներդդ առատ, երազներն ի վճիտ.
Ձմռան շունչ մը զանոնք քշելու կբավե՞ր:
Օրերն այդ փութանցիկ կհուզե՞ն մերթ հոգիդ,

Առավոտ թե կեսօր թե նվաղ իրիկուն,
Եվ գարուն թե ձմեռ՝ տրտմունակ կամ շոյող,
Քու սիրտդդ՝ պերճ ծաղիկ, գաղտ բույրով տոգորուն,
Կցաներ հիացքի և ժպտի կայծ ու դող
Առտվան, իրիկվան լույս թե մութ ժամերուն:

Ծափրակները թոշնած, բույրերը ցիրուցան
Ետ կուգա՞ն հաճելու ծառերուն տակ նախկին:

Ահ, կանաչ կհագնի՞ն տերևները աշնան,
Քայլն, ըսե՛, կփնտրե՞ երբեմնի իր ուղին:
Օ՜ թոշնած շափրակներ, օ՜ բույրեր ցիրուցան:

Ալ ինչո՞ւ վերհիշել անցյալն այդ հեգնադեմ,
Օ դո՛ւն, որ մահն եղար, խառնըված սուրբ ախրույն,
Օ դո՛ւն՝ վարդ քնքշաթերթ և սուր փուշ նույն ատեն,
Դո՛ւն՝ կորած այգերու հեղհեղուկ իրիկուն:
Զհիշենք ա՛լ, ավա՜ղ, անցյալն այդ հեգնադեմ:

ՏԱՂ՝ ԱՆԾԱՆՈԹ ԱՂՋԿԱՆ

Զանգակատուն մը ինչպես իր արցունքներն արույրե
Զորս հովերուն մեջ մեղմիկ անփութորեն կսփռե,
Պաղատելով գերագույն արարիչին անհոգի,
Այդպես ալ, օ՜ կույս աղջիկ, այս տրոփները արյան,
Ցրված, ծուխին և մանրիկ փսորներուն պես խունկի,
Քե՛զ կաղերսեն մութին մեջ, ուր երգերն իմ կմխան:

Պե՞տք է դեռ քեզ ապասեմ, երբ հետքերն իմ ոտքերուն
Դրոշմեցին քաղաքներ, ավերակներ, շիրմատուն
Եվ անտառներ մթաստվեր,
Երբ կտրեցի հետապինդ, կրկներևույթդ գրկած՝
Օվկիանոսներ խաժագույն, ձյունասպիտակ կատարներ
Եվ ավազներ հրայրյաց:

Եվ տարիներ շարունակ, զերթ ուխտավոր տարփակեզ,
Անհանգրվան ու անքուն թափառելե ետք այսպես
Անկարելի երկիրներ,
Հայցելե ետք սյուքերուն, որ գեթ ձայնդ ինձ բերեն,
Ի՞նչ, այս անգա՞մ ալ միթե, ըսե՛, պիտի մեկնիմ դեռ,
Զհանդիպած քեզ նորեն:

Անանո՛ւն իմ, ահ, եկո՜ւր: Ինձի համար կդառնաս
Բեատրիչեն իմ պարկեշտ և Ագնեսն իմ ու Լարաս,

Եվ Հելենն իր ներքողած Ռոնսարն ինչպես կամ Վինյին,
Որ երազեց ու երգեց աստվածային Էլոան,
Կուզեմ, օ՜ կույս, հեռավոր դարերու վեհ ճակտոնին
Խոնջ մատերով փորագրել տառերը սուրբ քու անվան:

ՏԱՂԻԿ

Կիմանա՞ս դուն երբեք: Աղվո՛ղըս, երբ կանցնիս
Պարտեզեն ցողաթուրմ,
Առանց իսկ զգալու կսփռես ամենուր
Թովչանք ու թարմություն:

Իսկ երբ որ ցոլալով կերևիս դուն անփույթ
Ծաղկոցին անկյունեն,
Ծաղիկները բոլոր կդառնան, որ իսկույն
Քեզ խոնարհ ողջունեն:

Եվ ի տես այտերուդ՝ հովին մեջ բուրելով,
Հազրեվարդ ու շուշան,
Իրենց նուրբ ցողունին վրա, լուռ ու թալկոտ,
Նախանձե կդողան:

Զգած խաղ ու խայտանք՝ դեղձանիկ ու սոխակ
Կբռնեն շունչերնին,
Որ լսեն դալարիքը մեղմիվ ընթադրող
Քայլերուդ մեղեդին:

Կապույտին մեջ կայթող թիթեռնիկը զվարթ,
Խաբվելով շլացքեդ,
Կհպի մազերուդ, որ տանի թևերով
Անոնցմե կայծ մը գեթ:

Այգիին մեջ աշնան, երբ կուզես նուռ քաղել,
Ծառերը հեզաբար
Կծռեն ճյուղերնին, որ թափեն միրգն իրենց
Կուրծքերուդ դողն ի վար:

Օդին մեջ ու շուրջը, ուր բույրեր կհածին,
Ծափրակներ կձյունեն,
Տերևները կըղձան կորզել կույս շրթներով
Համբույրներ քու մարմնեն:

Սյուքերը հեռուեն դեպի քեզ կշտապեն
Եվ, արբշիռ, կսուրան,
Ըմպած բարկ մշկաբույրը շունչիդ, որմե ես
Զրկըված եմ այնքան:

Մայր մտնող արևին տակ սաթե մազերուդ
Փրփուրներն հորդելակ
Կհոսին ուսերեդ որպես թե ըլլային
Կտոր մը արեգակ:

Աղվո՛ր ըս, երբ կանցնիս, թռչունները կարծես
Կշատնան ճյուղերուն,
Ծաղիկներն ավելի հոտավետ կդառնան,
Ավելի ջինջ՝ առուն:

ՈՐՀՆԵՐԳ ՄԱՐԴՈՒՆ*

Այս իրիկուն փոթորկոտ մակընթաց մը մարդկային,
Ցնորակոծ սաստկությամբ հորիզոնին հորդելով,
Ափին վրա իմ արտիս, ուր մոլոր է իմ հոգին,
Կփրփրեցնե հույսերն իր կարմրաշառայլ շեշտերով:

Ես կտեսնեմ հորձքն անոր, ինչպես թաթառն ամեհի,
Եվ հողմին մեջ, որ անոր խոլ խաղացքեն կպոռթկա,
Կշնչեմ տենդը ցրիվ հեծեծանքի, անդոհի
Եվ գերագույն տքնանքի ոստաններուն այս հսկա:

---

* Արմեն Տորյանի այս բանաստեղծությունը 1913 թ. ֆրանսիացի բանաստեղծների և գրողների միավորման հայտարարած մրցույթում առաջին մրցանակի է արժանացել և տպագրվել է նրա «Անվոլե» («Թռիչք») ալմանախում:

Կտեսնեմ ճիգ ու ճիչի, մետաղներու, անձկության
Մակընթացն այդ, որ կուտի, կուգա կոհակ առ կոհակ,
Եվ երազներըս հանկարծ պիշ-պիշ աչքեր կբանան
Աշտարակիս փղոսկրե պատերուն մեջ ամրափակ:

Մակընթացն այդ կուգա միշտ: Ա՛լ մինակ չեմ բնավին.
Առասպելյալ դարերու իմ մեջ կզգամ ուժն ամբողջ,
Կզգամ զիս մեծ՝ մեծությամբն աշխարհներուն ու կյանքին,
Եվ խորունկ եմ ավելի, քան հորձանքներն հողմագոչ:

Այսօր հզոր կզգամ զիս երգիչներուն պես բոլոր.
Բյուր անմահներ հառնեցին իմ սրտիս մեջ երերուն,
Տաղերն անոնց տոնական, անոնց դարերը բոսոր
Թևերըս լայն պարզեցին արյանըս բորբ տենդերուն:

Այս իրիկուն իմ մեջ կա առաքյալի շունչ մը տաք,
Այս իրիկուն զիս կզգամ աստվածներու շառավիղ.
Խաչիդ վրա ես հպարտ նահատակն եմ, օ քաղա՛ք,
Որ կտողաս ոսկիի տիղմին մեջ ու շարավին:

Ձեզի համար, մարդկային ալիքնե՛ր սուրբ ու վսեմ,
Հորիզոններ պարփակող պրոմեթևսյան թևերով
Կատարներուն վրա ես պիտի վառեմ ու բոցեմ
— Դարձուցած ձայնըս անթրոց և երգերն իմ՝ անհուն բով—

Ձեր բիբին մեջ արյունող առտուներու ծիրանին,
Կեսօրներու լույծ ոսկին, արևի հույզը եռման
Եվ իմ այս նոր հոգիես վարգող հողմերը ուժգին
Եվ շառագույն ճակտով խենթ խիզախանքներն ընդվզման:

Մակընթացնե՛ր մարդկային, եկեք ինձի շեներե,
Ես հպարտություն կուտամ հին հերոսներուն և անսանձ
Տորմիղներուն, զոր նորոգ Կոլումբոս մը կվարե
Դեպի նորոգ աշխարհներ, դեպի երկիրն ավետյաց:

Եկեք, եկե՜ք դուք ինձի: Խիզախանքով մը ցասման
Ես ճակտիս տակ կկրեմ բոլոր դարերն անարեգ,
Անցյալն ամբողջ ցեղերու, արևներու ապագան.
Եկեք ինձի, եղբայրնե՛ր, և դուք զանոնք կտեսնեք,

Երբ բանտերեն ձեր ժայթքած կոհակներով զայրագին
Ձեր մարդկային փոթորկոտ մակընթացը հորդելով,
Ափին վրա իմ արտիս, ուր մոլոր է իմ հոգին,
Անհուսությունն իր պատմե կարմրաշառայլ շեշտերով:

ՕՐՀՆԵՐԳ ԼՈՒՅՍԻՆ

Ա.

Ահ, տո՛ւր մեզի, օ՜ լույս, սիրտ մը, ուր շող ծագի,
Համբույրներու թիրսեր և ողկույզներ երգի,
Սերմեր երազներու և հասկաթուռ ծիլեր,
Խուրձ-խուրձ հույս ու ծիծաղ, գիրկ-գիրկ կապույտ ու սեր
Եվ բերկրության հունձքեր, խաղաղության պաշար,
Օ՜ լույս, սիրտ մը տուր ինձ քեզ տոնելու համար:
Անտառը կծփա և ծաղիկներ կերգեն,
Հովը, ոսկի Պակտոլ, բխած բիլ երկինքեն,
Գետի զովացքն ըմպած՝ կիջնե ձոր ու հովիտ:
Ի՜նչ արձակ է չորս դին, ինչքա՜ն վեհ ու վճիտ:
Թող օրհներգն իմ հառնե, և քու ամբողջ բարին
Թող պարուրե ամեն օրորոց ու շիրիմ:
Մարմնիս ու արյանը, ջիղերուս մեջ բուռ-բուռ
Ցրցքքնե ու ցանե, լեցուր ու փրփրեցուր
Երգի և դաշնության օրհնյալ ջուրը վերուստ
Եվ խայտանքը վսեմ, բույրը ճաճանչներուդ,
Որոնք այգ են ծերի, հեռակ՝ կաղի համար,
Ցույց են մուրացիկի, կույրի համար՝ լամբար...
Ահ, բա՛ց բիբըդ իմ մեջ, թող լույսըդ ապտորա,
Արև՛՝ անհո՜ւն ճայվածք տարիներուս վրա:

Բ.

Հայտնըվե, լո՛ւյս: Կիզե, արև՛: Ցոլա, իդեա՛լ:
Ջինեցեք գիս հպարտությամբ ծիրանափայլ:
Փետրտեցեք հոգիիս մեջ շափրակ-շափրակ
Քնարական ջահերուն բոցը երկնառաք:

Պարե, պարե բիբերուս մեջ, կյանքի հաստո՛ղ,
Հարե բոսոր շեփորներ ու եղջերափող,
Աստվածացմանս համար կերտե հաղթականար,
Փառաբանե պայծառությունն այս կենարար,
Բա՛ց ծաղիկներդ քունքերուս, ճակտիս վրան,
Որ օծյալ է բարձունքներեն, արև՛ լեռան:
Երգե, ճչա, դրոշներդ շառաչեցուր,
Ահ, վերջապես հայտնվե, լո՛ւյս ամենաբույր.
Ես տխրահեծ ձմեռ եմ, որ շող կմուրա,
Ուխտավոր եմ հեռուներու ճամբուն վրա:
Հպարտ կուրծքիս սալին եղիր կուանը տաք,
Թող կոչնազանգ ըլլա սիրտը, բռունցքդ՝ թակ:
Զա՛րկ, զա՛րկ անվերջ դափն ու թմբուկն հպարտության,
Փորփրե՛ իմ վերքը, միայն բա՛ց դուռդ լայն:

Գ

Ես՝ վիհերու զննիչ, բարձունքներու հաղթող,
Վեր, վեր կելլեմ ահա, հագած շլացք ու շող.
Անցյալով եմ ես մեծ, հզոր եմ ներկայով,
Արյունովդ՝ եռուն, քաղցուովդ՝ գինով:
Երկինքն է ինձ թիրախ, շանթը՝ նետ ու աղեղ:
Նայվածքովս՝ ներող, բազուկովս՝ ահեղ,
Օ լո՛ւյս, գեղեցկության աստվածներու կամոք
Մարդկությանն այս տխեղծ կուտամ տեսք մը բարվոք:

ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

Ա

Ծագած բոլոր այգերեն, օ, ավելի՛ անսովոր
Այգ մը պիտի բարձրանա տիղմին վրա երկրային:

Թիրս— Թիրսոս՝ Բաքոսի բաղեղապատ ցուպը:

Պակտոլ— Պակտոլոս՝ գետակ Լիդիայում, որ, ըստ հունական դիցաբանության, ոսկեփոշի՝ զանակներ էր թավալում:

Ժպտեցե՛ք, արտ ու ակո՛ս, երգեցե՛ք, լեռ ու ծործո՛ր,
Պատմեցե՛ք մեծ ու մաքուր Սիրո մասին բոլորին:
Ալելույա՜: Նոր կյանքի նոր տաճարներ, օ՜, տեսեք,
Ոսկեդարն է, որ կուգա, կհոչակե ծագե ծագ
Երազային ճախրի մայր խաղաղությունը անմեգ:
Ովսաննա՜: Թող շեփորներ պատռեն կոկորդ ու հագագ,
Թող շրթունքները վառին և ճաճանչներ ճարճատեն:
Ինկե՛ք, դառն արցունքնե՛ր, հեռո՜ւ, օրե՛ր մթնկա,
Ծիծաղեցե՛ք, կապույտնե՛ր, և երգեցե՛ք դաշնորեն.
Պրոմեթևսներ հաղթական պիտի օծվին մեզ արքա,
Եվ գլխագիր Օ-ի պես, օրենքներուն կատարեն
Առասպելյալ Արևն է, Արևն է, որ պիտի գա:

Բ

Ովսաննա՜: Թող շեփորներ պատռեն կոկորդ ու հագագ:
Ղազարոսնե՛ր, արթնցե՛ք: Գերեզմաններ՝, լայն բացե՛ք
Գիշերային կոպերնիդ երազային ու անմեգ
Խաղաղության վրա, որ կծփծփա ծագե ծագ:
Ճառագեցե՛ք, արևնե՛ր, հեղե՛ղ, հոսե՛, երգե՛, վի՛ն.
Մեռածներն են ալ մեռած: Փառք ի բարձո՜ւնս, վերքն է փակ:
Տաք աճյունները, ինչպես բեղմնափոշին, կծաղկին:
Վերածընունդն է ահա, և այգը նոր կելլե վեր:
Ովսաննա՜: Թող շեփորներ պատռեն կոկորդ ու հագագ,
Ղազարոսնե՛ր, արթնցե՛ք, արթնցե՛ք, օ՜ մեռելներ:

ԱՆԿԵԶ ՄՈՐԵՆԻՆ

Բանաստե՛ղծ: Ե՛ս եմ ահա:— Հոգվույդ որդան կարմիրին
Եվ կապույտին մեջ հովու ես ջահրս վեր կբռնեմ:
Կճարճատեմ ու կելլեմ, և իմ անկեզ մորենին
Քերթվածն է, երգը միայն, աստվածային ու վսեմ:
Մոտեցի՛ր ինձ ու նայե՛ և շոշափե՛ համարձակ
Երազակոծ դեմքիս պես նաև բոցերս ելման:
Ես կրակն եմ արբազան, որ կայրե մեղք ու զանցանք,

Ես դյութանքն եմ թրթռացող, շնչող ամեն գոյության,
Ես արյունն եմ աշխարհի, քթթումը ձույլ պղինձին,
Ես գգվանքն եմ, գիրկը սուրբ և օրորումը մաքուր,
Ես եմ խորանը երգող, նաև անկեզ մորենին,
Ես եմ, որ հուր պսակով կօծեմ կոհակ ու փրփուր,
Ես եմ նետերը ոսկի, որոնց թիրախն է արփին:
Ես բնազդն եմ կանացի, տղամարդու ուժն արու,
Եվ Մարդն եմ ես ու բոլոր խորհուրդներն իսկ երկնային:
Եվ բարձրության մեջ եմ ես Կովկասյան սեգ լեռների,
Թռչունին մեջ ու մանկան, որ կերգեն սեր ու ժպիտ,
Միջօրեին մեջ հրկեզ, երբ զենիթի իմ գահեն
Կարձակեմ ճիշդս բոցե, օրենքներդս գրանիտ,
Ծիածանի յոթներանգ ժապավենին մեջ եմ ես:
Ես՝ ամենուր, ես՝ հավերժ: Ես չունիմ վերջ ու վախճան
Գերմարդկային տարրերուն և բացարձակ ուժին մեջ,
Մեծ լիճերուն մեջ եմ ես, փոթորիկին ու լեռան,
Ուրկե ձյունի մանանան կթավալի գահավեժ:
Ես կրակն եմ, բոցն եմ ես և խարույկն եմ նույն ատեն:
Ոճիրներուն մեջն եմ ես և մեղքերուն ու ներման,
Մրրիկներու և հովու համբույրներուն մեջ ամեն,
Կտղուցին մեջ աստղերու և ցուլերու մոլեկան:
Ես կամ երգ ու հեծքի մեջ, կամ միրգերու մեջ հասուն,
Կամ դաշտերու մեջ դեղձան, ալիքներու մեջ ծովուն:

Ես ուղեկիցն եմ հեռու ասուպներուն բովանդակ,
Փայլն եմ արյան, արյունն եմ ծաղիկներուն երփնագույն,
Պատսպարան կուտամ ես հոգիներուն ճակտիս տակ
Եվ վիշտերու վերքին մեջ տրոփելով չունիմ քուն:
Ես խորհուրդն եմ ներշնչման և առեղծվածը կյանքին,
Անչափելին եմ, ինչպես հորիզոնները իրար
Ավազորեն խառնոտող անապատի խոլ քամին:
Քերթությունն եմ արբազան, խունկն ու կնդրուկը արդար,
Որոնք երկինք կհառնեն ու կիջնեն մեզ երկինքեն:
Ես այն եմ, որ կանցնի լուռ և չունի դեմք ու անուն,
Եղեգներու երգն եմ ես, կապույտի ճիչն ապաքեն
Եվ տրոփյունը բոլոր թռչուններու թևերուն:
Ես կորովն եմ գերագույն և անմահ շունչն ու հոգին,
Գիշերային դաշույնն եմ, բիբին շողյունը վայրի,

Եվ ես մեջն եմ արտերու մարդաձիու խրխինջին,
Հառաչանքին մեջ սիրո ու վախազդու սարսուռի:
Ես այն եմ, որ կտանի, կառաջնորդե Դանտեներ
Յոթնապատիկ սոսկումի ոլորտներեն դար ի վար,
Որ ճակատներ կվառե, կըլլա բոց ամպ ու եթեր
Եվ ձեռքերուն մեջ մարդոց կդնե սուր ու տապար:
Առաքյալին հետ եմ ես և կավետեմ մարգարեն,
Խորքն եմ վիհին, և սակայն հյուրը՝ բոլոր տոներուն,
Նախազգացումն եմ գարնան, որ փրթելով սարերեն,
Իր շունչին մեջ կտանի տարփոտ արտերը հեռուն:
Ես ոստյուն եմ ու թռիչք, մեկնում, խարիսխ ու կառան,
Բույրն եմ հողին և արև՝ ճակատներուն վրա բաց,
Հունտին մեջ եմ ծաղիկի, սառույցներուն մեջ լեռան,
Ալիքներու ձայնին մեջ ու արծիվին վերանալաց,
Ես գոյն եմ, լույսն առաջին, էությունն եմ, ես՝ Մայան:

Կրակ է, որ կժայթքե ամբոխներու հորձքն ի վար,
Կրակ է, որ կցայտե ժայռերեն, որ կփլին,
Կրակ է, որ կճչա նայվածքներու սիրահար
Եվ արնախում հեներու դաշույններու սուր սայրին:
Կրակ է, որ կպոռթկա գրկումներեն կիզանուտ
Եվ քու կամքեդ, բանաստե՛ղծ, հպարտությանդ կայծքարեն,
Ծփանքներեն քնարիդ, տող ու տունեն երգերուդ,
Որ ատրաշեկ արևներ և մայրամուտ կբուրեն:
Կրակ է, որ կհառնե տոփիներեն վաղ գարնան,
Դյուցազնական տաղերեն, շլացքներեն վարարուն.
Կրակ, կրա՛կ, հո՞ւր կա միշտ դրոշներու մեջ վառման,
Ըմբոստության բռունցքին ու բաշին մեջ հողմերուն:
Կրակ է, որ կշաչե, երբ ավիններ սլաքվին,
Երբ թափ առնեն հերոսներ, նային, շարժին, գրոհ տան,
Երբ պալատներ տապալին, խառնվի կուճը կավին,
Երբ ծնի Մարդն ու չքվին արհավիրքներ գիշերվան:
Կրակ է, որ կշողա կողերն ի վար բուրգերուն,
Կրակ է, որ կմարի աստվածներու քունին մեջ,
Կրակ, կրա՛կ հավիտյան, ամենուրեք, անդադրում՝
Այնտեղ, ուր սերը կերգե, կտոչորի ամեն տենչ,
Ատելության բիբերեն կիյնա երկինք մը ամպոտ,
Այնտեղ, ուր դարը դարին զոդվելով, հար կմնա,

Ուր բզեզներ թռչելով, կայրեն ոլորտը ամբողջ,
Եվ երազի թևին տակ կծվարին կյանք ու մահ:
Կրակն է, որ շունչ կուտա քեզ, օ՜ քնար, օ՜ խաբկանք,
Օ՜ խորանի պաշտամունք, խյարույկներու տարակույս,
Ձե՛զ, ջահավոր ամբոխնե՛ր, որ դեպի զոհը կերթաք,
Եվ ձե՛զ, մեղքե՛ր մարդկային, որ քավության չունիք հույս:
Կրակն է, որ կոստոստե, կաղաղակե, կտրա
Անպարագիծ օվկիանին, լիճին վրա ծագե ծագ,
Նահատակի պսակին, դափնիներուն ալ վրա,
Տառապանքի, տենչերու և քրտինքին մեջը տաք:
Կրակ, կրա՛կ հավիտյան արտերուն մեջ, բիբերուն,
Քանզի հուր է՝ չորրորդ տարր, ամեն իր ու արարած՝
Քամի, երկիր ու երկինք, դրախտ, դժոխք ու անհուն,
Տեսանողի լույս ճակտով առաքյալի Բանն՝ աստված,
Ճամբաներու սիրահար, ջինջ աչքերով մարգարեն,
Հաճախանքով Անդիի ինքնամոռաց հագներգուն
Եվ տեսլահարը, որու նպյվածքներուն առջևեն
Կնահանջեն խավարներ, կցնդի կույտն ամպերուն:
Եվ կրակ կա տակավին աչքերուն մեջ ընտրյալի,
Կշռույթին մեջ, երբ հոգին կվերանա լիովին,
Ջսպելով հողմ ու մրրիկ, որ հորիզոնը փայլի...
Բանաստե՛ղծ, ա՛ռ ջահը և նայե՛ ծագող Արևին: